Արեն Նազարյան
էլ. Փոստ՝ [redacted]
Հեռ.՝ [redacted]

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության տնօրեն Հովհաննես Մովսիսյանին

Տեղեկատվության հարցում «Մեդիայի սեփականության մոնիտորինգ - Հայաստան» հետազոտության շրջանակում

Հարգելի պարոն Մովսիսյան,

Ես Արեն Նազարյանն եմ, Ձեզ գրում եմ «Հետքի» և «Մեդիայի գլոբալ ռեգիստր» (Global Media Registry) կազմակերպության անունից՝ Հայաստանի մեդիայի ոլորտում թափանցիկության ապահովմանը միտված հետազոտությանն աջակցելու խնդրանքով:

Մենք իրականացնում ենք «Մեդիայի սեփականության մոնիտորինգ - Հայաստան (Media Ownership Monitoring - MOM Armenia) ծրագիրը՝ Կովկասի տարածաշրջանում մեդիայի սեփականության և բազմակարծության առաջին համապարփակ ուսումնասիրությունը: «Առաջին ալիք» և «Առաջինի լրատվական ալիք» հեռուստաալիքները ընդգրկվել են Հայաստանի առաջատար 40 ազդեցիկ լրատվամիջոցների ցանկում՝ հիմնված լսարանի մեծության և տեղեկատվական բովանդակության վրա: Այդ պատճառով էլ գրում ենք Ձեզ:

Մեդիայի սեփականության մոնիտորինգը միջազգային հետազոտական նախաձեռնություն է, որը փաստագրում է մեդիայի սեփականության կառուցվածքը՝ գնահատելու բազմակարծությունն ու մեդիայի կենտրոնացումը: 2015 թվականին սկզբնապես մշակված լինելով «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության կողմից, ծրագիրն այժմ իրականացնում է Global Media Registry գերմանական ոչ առևտրային հասարակական կազմակերպությունը: MOM-ը իրականացվել է ավելի քան 30 երկրներում, ներառյալ՝ Մոլդովան, Գերմանիան, Իռլանդիան, Ալբանիան, Բոսնիա և Հերցեգովինան, Շրի Լանկան և Բրազիլիան: «MOM Հայաստան» հետազոտությունը ֆինանսավորվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Արտաքին գործերի նախարարության «Քաղաքացիական հասարակության համագործակցություն» ծրագրի կողմից: Նախագիծը կավարտվի 2025 թվականի հոկտեմբերին, և հավաքված տեղեկատվությունը հասանելի կլինի անգլերեն և հայերեն, գլոբալ հարթակում:

Մեդիայի սեփականության թափանցիկությունը կարևոր է բազմակարծության ապահովման և կարծիքների բազմազանության պաշտպանության համար: Նույնիսկ այն դեպքերում, երբ համապատասխան օրենսդրություն գոյություն չունի կամ գոյություն ունի, բայց պատշաճ կերպով չի գործում, մեդիայի սեփականատերերը պետք է պրոակտիվ կերպով ներկայանան այն լսարանին, որին ծառայում են: Այս ուսումնասիրությունը կբարձրացնի մեդիայի թափանցիկության աստիճանը լայն հանրության համար և կտեղեկացնի Հայաստանում մեդիայի սեփականության ներկա իրավիճակի մասին:

«MOM -Հայաստան» հետազոտության շրջանակում կվերլուծվի տպագիր, առցանց, ռադիո և հեռուստատեսության 40 ամենաազդեցիկ լրատվամիջոցների սեփականության կառուցվածքը: Մեր հետազոտության արդյունքները կներկայացնենք 2025 թվականի հոկտեմբերի վերջին Երևանում կայանալիք կոնֆերանսի ժամանակ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության ներկայացուցիչ, կարծում ենք, որ Դուք կարող եք զգալիորեն նպաստել մեր նախագծին մասնագիտական փորձագիտությամբ և տեղեկատվությամբ: Խնդրում ենք տրամադրել այն տվյալները, որոնք չենք կարողացել գտնել բաց աղբյուրներում.

1. Նշեք «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության աշխատակիցների թիվը՝ մեր նամակը ստանալու դրությամբ: Խնդրում եմ առանձին նշել քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողների թիվը:
    a. Նշեք՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության ո՞ր ծրագրում ի՞նչ հաստիք է զբաղեցնում Լուսինե Նորիկի Բարսեղյանը:
2. Խնդրում եմ՝ նշեք, թե ովքե՞ր են «Առաջինի լրատվական ալիք»-ի գործադիր տնօրենը և գլխավոր խմբագիրը:
    a. Տրամադրեք՝ գործադիր տնօրենի և գլխավոր խմբագրի կենսագրականը և գործունեության մասին տվյալներ:
    b. Ինչու՞ «Առաջինի լրատվական ալիք»-ի կայքում «Մեր մասին» բաժին չկա:
    c. Քանի՞ մարդ է աշխատում «Առաջինի լրատվական ալիք»-ում:
        i. Նրանցից քանիսն են համետեղությամբ աշխատում նաև «Առաջին ալիք»-ում:
3. Խնդրում եմ առանձին-առանիձն՝ ըստ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության ծրագրերի (Առաջին ալիք, Առաջինի լրատվական ալիք, Առաջինի միջազգային ալիք, Նոր ալիք) նշել՝ ո՞ր ծրագրի գործունեության համար որքա՞ն գումար է հատկացվել 2024 թվականին:
4. Խնդրում եմ՝ տրամադրեք, թե «Առաջին ալիք մեդիա ակադեմիա» հիմնադրամի գործունեության համար որքա՞ն գումար է տրամադրվել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության ֆինանսական միջոցներից 2024 թվականին:
    a. Եթե հիմնադրամը գործունեությունը իրականցնելու համար ֆինանսական միջոցներ է ներգրավել այլ աղբյուրներից, խնդրում եմ տրամադրեք տեղեկատվություն, թե որքան գումար է ստացել՝ նշելով աղբյուրը:
    b. Քանի՞ աշխատակից ունի հիմնադրամը:
5. Խնդրում եմ տրամադրել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության «Առաջին ալիք Ամերիկա» դուստր ընկերության 2024 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունը:
    a. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը 2024 թվականին «Առաջին ալիք Ամերիկա» ընկերության գործունեության համար որքա՞ն գումար է տրամադրել:
    b. Գործունեությունը ապահովելու համար մնացած ֆինանսական միջոցները ինչպե՞ս են ներգրավվել և որքա՞ն:
        i. Խնդրում եմ առանձին նշել գովազդից ստացված եկամտի չափը:
    c. «Առաջին ալիք Ամերիկա» ընկերության եթերը օրական քանի՞ ժամ հեռարձակում է ապահովում:

   d. Հեռարձակված բովանդակության քանի՞ տոկսը կամ ժամն է արտադրվել հենց «Առաջին ալիք Ամերիկա» ընկերության կողմից:
      i. Մնացած եթերաժամին ի՞նչ բովանդակություն է հեռարձակվում:
   e. Ի՞նչ բովանդակությամբ հաղորդումներ են արտադրվում, նշեք հաղորդման վերանգրերը:
   f. Քանի՞ աշխատակից ունի «Առաջին ալիք Ամերիկա» ընկերությունը:
6. Խնդրում եմ նշեք՝ «Առաջինի միջազգային ալիք»-ը ի՞նչ տարբերակով է հեռարձակվում:
   a. Ո՞ր երկրներում է այն հասանելի:
   b. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը 2024 թվականին «Առաջինի միջազգային ալիք» ծրագրի գործունեության համար որքա՞ն գումար է տրամադրել

Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու 2025 թվականի հոկտեմբերին կայանալիք կոնֆերանսին՝ քննարկելու արդյունքները տարբեր շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ՝ հրատարակիչներ, հեռարձակողներ, լրագրողներ, կարգավորող մարմինների ներկայացուցիչներ և քաղաքականություն մշակողներ: Կոնկրետ օրվա մասին կտեղեկացնենք լրացուցիչ:

Թեև մեր ուսումնասիրության մեջ հիմնականում օգտագործվում են հրապարակայնորեն հասանելի տվյալներ, մենք նախապատվություն ենք տալիս առաջնային աղբյուրներին՝ ճշգրտության համար: Մենք կարծում ենք, որ այս տեղեկատվության տրամադրումը ոչ միայն հանրային պարտավորություն է, այլև բխում է լրատվամիջոցների շահերից:

Այս նամակագրությունը և Ձեր պատասխանը, կամ պատասխանի բացակայությունը, կփաստագրվի և կցուցակագրվի մեր աշխատանքի թափանցիկության բաժնում: Ինչպես նշվեց, մեդիայի սեփականության ամբողջական մոնիտորինգը կհրապարակվի առցանց և կթարմացվի շարունակաբար:

Մենք սպասում ենք Ձեր պատասխանին մինչև 2025 թվականի սեպտեմբերի 5-ը և պատրաստ ենք պատասխանել ցանկացած հարցի:

Շնորհակալություն Հայաստանի մեդիայի թափանցիկությանը միտված ջանքերում ձեր ներդրման համար:

Հարգանքով,

Արեն Նազարյան

«Մեդիայի սեփականության մոնիտորինգ Հայաստան» ծրագրի թիմ՝ «Հետք» և Global Media Registry: